

Դրամաշնորհային հաշվետվություն N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|--|---|
| Ծրագրի անվանում | «Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - Ավան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.-31.12.2022թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 03.10.2022 - 30.12.2022թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2022 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալական աջակցության տրամադրում,
- հոգեբանական աջակցության տրամադրում,
- իրավական աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- խաղեր, հեռուստադիտում,
- խմբակներ,
- մշակութային միջոցառումներ, հանդիպումներ և էքսկուրսիաներ,
- տաք ճաշի տրամադրում,
- Ըստ անհրաժեշտության՝ լվացքի և բաղնիքի ծառայության տրամադրման կազմակերպում:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

- Սոցիալական աջակցության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 70 կարիքի գնահատում և վերագնահատում: Սոցիալական աշխատողի կողմից կենտրոնում իրականացված ընդունելությունների, անհրաժեշտության դեպքում նաև տունայցերի միջոցով անհատական և խմբային աշխատանքների արդյունքում մասնագիտական աջակցություն է տրամադրվել թվով 70 շահառուի՝ ներառյալ 1 դեպքի վարման իրականացում՝ աչքի վիրահատության կազմակերպում: 25 շահառուի համար իրականացվել է ուղղորդում, 5 շահառուի համար՝ միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Հոգեբանական աջակցության շրջանակում շահառուներին տրամադրվել է հոգեբանական խորհրդատվություն: Հոգեբանը կազմակերպել է նաև 12 խմբային հանդիպումներ՝ միտված շահառուների հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, սթրեսակայության ձևավորմանը և այլն:
- Իրավական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների մասին:
- Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում բուժքրոջ կողմից իրականացվել է թվով 58 շահառուի ընդունելության կազմակերպում, որից 3 շահառուի ուղղորդում բժշկական հաստատություններ: Բժշկական աջակցության շրջանակներում շարունակաբար իրականացվում է շահառուների առողջական վիճակին հետևում, առողջ ապրելակերպի խթանում շահառուների շրջանում:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուսուցողական, հիշողության ամրապնդմանն ուղղված

խաղերի, հեռուստադիտումների և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:

- Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 4 խմբակ՝ հոգեբանի անկյուն, հմուտ ձեռքեր, գրական խմբակ, կինեզոլոգիայի, որին մասնակցել է 20 շահառու:
- Կազմակերպվել է թվով 11 միջոցառում, այդ թվում՝ 6 միջոցառում կենտրոնից դուրս: Միջոցառումներ նվիրված՝ Շարլ Ազնավուրի գրադարանում կազմակերպված ցուցահանդես, Էքսկուրսիա՝ Զվարթնոց, Էջմիածին, Ավան վարչական շրջանի ղեկավարի ընդունելություն, տարեցների միջազգային օր, Էքսկուրսիա՝ Աշտարակ, Մուղնի, Շենգավիթ ՑԿ-ի երգչախմբի ընդունելություն, Դրամատիկական և Պարոնյանի անվան թատրոններ այց, Չարենցի տուն-թանգարանում միջոցառում, 2 ծննդյան տոնի նշում, Ամանոր: Միջոցառումներին մասնակցել են 40 շահառու:
- Կենտրոնում շահառուներին շաբաթական 5 օր տրամադրվել է տաք ճաշ, սուրճ և քաղցրավենիք:
- Հաշվետու ժամանակահատվածում 5 շահառու օգտվել է բաղնիքի տրամադրման ծառայությունից:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հաշվետու ժամանակահատվածում Ավանի ցերեկային կենտրոնի ֆեյսբուքյան էջում տեղադրվել են ներքոնշյալ նյութերը.

- Էքսկուրսիա դեպի Զվարթնոց և Էջմիածին (տե՛ս հետևյալ հղումով՝ https://m.facebook.com/story.php?story_fbid=196536449615994&id=100077789192799&mibextid=Nif5oz):
- Ցուցահանդես Շարլ Ազնավուրի անվան գրադարանում (տե՛ս հետևյալ հղումով՝ https://m.facebook.com/story.php?story_fbid=198593702743602&id=100077789192799&mibextid=Nif5oz):
- Այց Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոն (տե՛ս հետևյալ հղումով՝ https://m.facebook.com/story.php?story_fbid=197676776168628&id=100077789192799&mibextid=Nif5oz):
- Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ընդունելություն (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://m.facebook.com/story.php?story_fbid=198037486132557&id=100077789192799&mibextid=Nif5oz):
- Շենգավիթ ՑԿ-ի երգչախմբի ելույթը Ավան ՑԿ-ում (տե՛ս հետևյալ հղումներով՝ https://www.facebook.com/watch/?v=668974074620899&extid=CL-UNK-UNK-UNK-AN_GK0T-GK1C&mibextid=2Rb1fB&ref=sharing):
- Ավան ՑԿ-ի շահառուների մասնակցությունը <<Առողջ ծերացում>> հանրային իրազեկման արշավին (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/watch/?v=819952972490400&extid=CL-UNK-UNK-UNK-AN_GK0T-GK1C&mibextid=2Rb1fB&ref=sharing):
- <<Չարենցը երգերի մեջ>> խորագրով միջոցառման հատուկ հյուրերն էին Ավան ՑԿ-ի շահառուները, որտեղ իրենց մասնակցությունն ունեցան ՑԿ-ի շահառուները (տե՛ս հետևյալ հղումներով՝

https://www.facebook.com/watch/?v=2054691918047939&extid=CL-UNK-UNK-UNK-AN_GK0T-GK1C&mibextid=2Rb1fB&ref=sharing ,
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0hTLQRpL2sgFANunQaUPRceg19n5u3cyepnC8beBcE5M7j1QNBuuSpvZvcG4Zkd5GI&id=100077789192799):

- Ծննդյան տոների նշում (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/watch/?v=465780842310179>):
- Գործող խմբակների ակտիվ գործունեությունը շարունակական է՝ հմուտ ձեռքերի խմբակի նախատոնական եռուզեղը (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02yd816uLbMX1Am8gip3cKfkbb3A9bKTKkx47u7A8e1KhLikT3x56zJaxTdgF6hZgrl&id=100077789192799):

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողություննի իրականացմանը խոչընդոտող խնդիրների չենք բախվել:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Ծրագրի նպատակին հասնելու համար իրականացվել է հանդիպում Ավան վարչական շրջանի ղեկավարի հետ, որտեղ անդրադարձել ենք ջեռուցման, տարածքի բարեկարգման և մի շարք այլ խնդիրների:

Կենտրոնի Սոցիալական աշխատողները մասնակցել են Ավան վարչական շրջանի համայնքապետարանում կազմակերպված 2023 թվականին նախատեսվող ծրագրերի քննարկմանը:

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> | <p>«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ</p> |
| <p>Նախարարության գլխավոր քարտուղար՝</p> | <p>Նախագահ՝</p> |
| <p>Ս.Մուրադյան (ստորագրություն) Կ. Տ.</p> | <p>Ե.Մխիթարյան (ստորագրություն) Կ. Տ.</p> |